ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-26/72»

ք. Տաշիր **«17» հունիսի 2026թ.**

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի» կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԼՖԱՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Դումիկյանի, որը գործում է «ԱԼՖԱՇԻՆ» ՍՊԸ-ն կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի Երևանյան փողոցի /Մ3 մայրուղու հատված/ բազմաբնակարան շենքերի ֆասադների փոխարինման և պատշգամբների ոճային վերակառուցման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-26/72» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 31.10.2026թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եաղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 50 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների

տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի նախագծային փաստաթղթերում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող

աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 45990000 (քառասունհինգ միլիոն ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, որից 7665000 (յոթ միլիոն վեց հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով

նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
2	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

	իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	
3	Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսազդանշանային առկայծող լապտերներով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
4	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
5	Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
6	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.11 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան	«ԱԼՖԱՇԻՆ» ՍՊԸ
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94	ք. Տաշիր, Շահումյան փ., շ 5, բն 16
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 900272178022	Հ/Հ 220143330219000
Հ/Հ 900272000390	ՀՎՀՀ 06947169
ՀՎՀՀ 06966995	
----------Է. Արշակյան	----------Ս. Դումիկյան
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« » հունիսի 2026թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-26/72»
ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
«ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՇԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ /Մ3 ՄԱՅՐՈՒՂՈՒ ՀԱՏՎԱԾ/ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՖԱՍԱԴՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԵՎ ՊԱՏՇԳԱՄԲՆԵՐԻ ՈՃԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	3	4	5	6	7
	Երևանյան փողոցի թիվ 9 բազմաբնակարան շենք				
	քանդման աշխատանքներ				
1	պատշգամբի մետաղական երեսաշերտի քանդում	100մ^2	1,424	34,376	48,95
2	տանիքի ջրթափ խողովակների ապամոնտաժում	100մ	0,64	32,552	20,83
3	պատերի հին ներկի մաքրում	100մ^2	3,50	28,573	100,00
4	պատշգամբների մետաղական ճաղաշարի ապամոնտաժում	100մ	2,68	22,507	60,32
5	շին աղբի բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաների վրա	տն	2,0	0,720	1,44
6	Շին աղբի տեղափոխում մինչև 5կմ	տն	2,0	1,998	4,00
	Կառուցման աշխատանքներ				
1	Ջրթափ խողովակների մոնտաժում օգտագործելով ապամոնտաժվածները	100մ	0,64	65,105	41,67
2	արտաքին պատերի և պատշգամբների կողային հատվածների g/ավազային սվաղ	մ^2	350,0	2,166	758,11
3	արտաքին պատերի և պատշգամբների կողային հատվածների ներկում բարձրորակ ճակատային ներկով	100մ^2	3,5	135,197	473,19
4	Մետաղական հիմնակմախքի մոնտաժում ալյուկոբոնդի համար/268գծմ/	տն	0,6244	84,714	52,90
5	պողպատե խողովակի 40x40x2 արժեքը	մ	268,00	0,997	267,22
6	պատշգամբների երեսապատում ալյուկոբոնդով	մ^2	142,4	24,233	3450,71
7	Արտաքին փայտամածի պատրաստում և ապամոնտաժում հարդարման աշխատանքների համար	100մ^2	5,36	126,417	677,60
	Երևանյան փողոցի թիվ 14 բազմաբնակարան շենք				
	քանդման աշխատանքներ				
1	պատշգամբի մետաղական երեսաշերտի քանդում	100մ^2	4,752	34,376	163,35
2	տանիքի ջրթափ խողովակների ապամոնտաժում	100մ	1,27	32,552	41,34
3	պատերի հին ներկի մաքրում	100մ^2	12,71	28,573	363,16
4	պատշգամբների մետաղական ճաղաշարի ապամոնտաժում	100մ	10,80	22,507	243,08
5	շին աղբի բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաների վրա	տն	6,7	0,720	4,82
6	Շին աղբի տեղափոխում մինչև 5կմ	տն	6,7	1,998	13,39
	Կառուցման աշխատանքներ				
1	Ջրթափ խողովակների մոնտաժում օգտագործելով ապամոնտաժվածները	100մ	1,27	65,105	82,68
2	արտաքին պատերի և պատշգամբների կողային հատվածների g/ավազային սվաղ	մ^2	1271,0	2,166	2753,02
3	արտաքին պատերի և պատշգամբների կողային հատվածների ներկում բարձրորակ ճակատային ներկով	100մ^2	12,71	135,197	1718,36
4	Մետաղական հիմնակմախքի մոնտաժում ալյուկոբոնդի համար/1080գծմ/	տն	2,5164	84,714	213,17
5	պողպատե խողովակի 40x40x2 արժեքը	մ	1080,0	0,997	1076,85

6	պատշգամբների երեսապատում ալյուկոբոնդով	մ²	539,0	24,233	13061,34
7	Արտաքին փայտամածի պատրաստում և ապամոնտաժում հարդարման աշխատանքների համար	100մ²	9,84	126,417	1243,94
	Երևանյան փողոցի թիվ 17բ բազմաբնակարան շենք				
	քանդման աշխատանքներ				
1	պատշգամբի մետաղական երեսաշերտի քանդում	100մ²	1,44	34,376	49,50
2	տանիքի ջրթափ խողովակների ապամոնտաժում	100մ	1,12	32,552	36,46
3	պատերի հին ներկի մաքրում	100մ²	9,62	28,573	274,87
4	պատշգամբների մետաղական ճաղաշարի ապամոնտաժում	100մ	3,60	22,507	81,03
5	շին աղբի բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաների վրա	տն	3,50	0,720	2,52
6	Շին աղբի տեղափոխում մինչև 5կմ	տն	3,50	1,998	6,99
	Կառուցման աշխատանքներ				
1	Ջրթափ խողովակների մոնտաժում օգտագործելով ապամոնտաժվածները	100մ	1,44	65,105	93,75
2	ճակատների g/ավազային սվաղ	մ²	962,0	2,166	2083,72
3	արտաքին պատերի և պատշգամբների ներկում բարձրորակ ճակատային ներկով	100մ²	9,62	135,197	1300,60
4	Մետաղական հիմնակմախքի մոնտաժում ալյուկոբոնդի համար	տն	0,8388	84,714	71,06
5	պողպատե խողովակի 40x40x2 արժեքը	մ	360,00	0,997	358,95
6	պատշգամբների երեսապատում ալյուկոբոնդով	մ²	264,0	24,233	6397,39
7	Արտաքին փայտամածի պատրաստում և ապամոնտաժում հարդարման աշխատանքների համար	100մ²	6,86	126,417	867,22
	Ընդամենը				***38559,52***
	ԱԱՀ 20%				***7711,90***
	Ընդամենը				***46271,42***

*** Կապալառուն աշխատանքները կատարում է Տաշիր բնակավայր հասցեում: Կատարողական կամ հանձնման-ընդունման յուրաքանչյուր փաստաթղթի հետ ներկայացնել ծածկված ակտերը, օգտագործվող շինարարական նյութերի փորձարկման ակտերը, կամ սերտիֆիկատները գործող ստանդարտներին համապատասխան:**

Աշխատանքների իրականացման համար պահանջվում է.
Շինարարության իրականացման լիցենզիա հետևյալ ներդիրով՝
03.04.Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ 2-րդ կամ 3-րդ դաս

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272178022
Հ/Հ 900272000390
ՀՎՀՀ 06966995

----------Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԼՖԱՇԻՆ» ՍՊԸ
ք. Տաշիր, Շահումյան փ., շ 5, բն 16
ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 220143330219000
ՀՎՀՀ 06947169

----------Ս. Դոմիկյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«17» հունիսի 2026թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-26/72»
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*
«ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՇԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ /Մ3 ՄԱՅՐՈՒՂՈՒ ՀԱՏՎԱԾ/ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՖԱՍԱԴՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ և ՊԱՏՇԳԱՄԲՆԵՐԻ ՈՃԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի Երևանյան փողոցի /Մ3 մայրուղու հատված/ բազմաբնակարան շենքերի ֆասադների փոխարինման և պատշգամբների ոճային վերակառուցման աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	31.10.2026թ.
ԸՆԴԱՄԵՆԸ		**Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից**	**31.10.2026թ.**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272178022
Հ/Հ 900272000390
ՀՎՀՀ 06966995

----------Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԼՖԱՇԻՆ» ՍՊԸ
ք. Տաշիր, Շահումյան փ., շ 5, բն 16
ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 220143330219000
ՀՎՀՀ 06947169

----------Ս. Դումիկյան
/ստորագրություն/
Կ.Տ.

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը, իսկ «Ավարտը» սյունակում կատարման ժամկետը սահմանվում է օրացուցային օրերով:*

Հավելված N 3
« 17 » հունիսի 2026թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-26/72»
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը		դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/501	Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի Երևանյան փողոցի /Մ3 մայրուղու հատված/ բազմաբնակարան շենքերի ֆասադների փոխարինման և պատշգամբների ոճային վերակառուցման աշխատանքներ	առկա ֆինանսական միջոցներով	… %	… %	… %	… %	… %	… %	4599000	9198000	9198000	9198000	9198000	9198000	9198000
			ոչ առկա ֆինանսական միջոցներով	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272178022
Հ/Հ 900272000390
ՀՎՀՀ 06966995

_____Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԼՖԱՇԻՆ» ՍՊԸ
ք. Տաշիր, Շահումյան փ., շ 5, բն 16
ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 220143330219000
ՀՎՀՀ 06947169

_____Ա. Դումիկյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 4.2
«ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-26/72» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Տաշիր « 17 » հունիսի 2026թ.

«ԱԼՖԱՇԻՆ» ՍՊԸ-ը, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Դումիկյանի /նույն. քարտ 010135556, տրված 06.12.2017թ., 039-ի կողմից, ՀԾՀ 6702840569/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «**ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-26/72**» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԱԼՖԱՇԻՆ» ՍՊԸ
ք. Տաշիր, Շահումյան փ., շ 5, բն 16
ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 220143330219000
ՀՎՀՀ 06947169

Ս. Դումիկյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

17/հունիսի/2026թ.

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ **«ԱԼՖԱՇԻՆ» ՍՊԸ**	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ**	
6. Վճարողի հաշվի համարը՝ **220143330219000**	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ **06947169**	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան**	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ **06966995**	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900275081108**	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ **6940714 /վեց միլիոն ինը հարյուր քառասուն հազար յոթ հարյուր տասնչորս/**	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ /AMD/**	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ **Տուժանքի մասին համաձայնագիր (որակավորման ապահովում) «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-26/72»**	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

Հավելված 5.1
«ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-26/72» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Տաշիր « 17 » հունիսի 2026թ.

«ԱԼՖԱՇԻՆ» ՍՊԸ-ը, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Դումիկյանի /նույն. քարտ 010135556, տրված 06.12.2017թ., 039-ի կողմից, ՀԾՀ 6702840569/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **«ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-26/72»** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար: 1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԱԼՖԱՇԻՆ» ՍՊԸ
ք. Տաշիր, Շահումյան փ., շ 5, բն 16
ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 220143330219000
ՀՎՀՀ 06947169

Ս. Դումիկյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

17/հունիսի/2026թ.

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «ԱԼՖԱՇԻՆ» ՍՊԸ	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝ 220143330219000	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 06947169	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան**	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ **06966995**	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900275081108**	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ **4627143 /չորս միլիոն վեց հարյուր քսանյոթ հազար հարյուր քառասուներեք/**	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ /AMD/**	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ **Տուժանքի մասին համաձայնագիր (պայմանագրի ապահովում) «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-26/72»**	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*